# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Խաչպար ՍՊԸ-ն ԵԱՃԱՊՁԲ-2023/15-2-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 64 | Դիաբակ Խտանյութ | Ինտերսեն պլյուս | <Դիաբակ>> - Հակաբակտերիալ հեղուկ լվացող միջոց հանդիսացող խտանյութ է, պիտանելիության ժամկետը՝ 3-5 տարի, աշխատանքային պատրաստի լուծույթը պիտանի է 10 - 14 օր, նախատեսված է բազմակի օգտագործման համար: Որպես ազդող նյութ պարունակում է ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ 11%: Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը պետք է լինի՝ ոչ պակաս քան 15C-ից մինչև ոչ ավել քան 25C-ը: Ախտահանիչ միջոցը օժտված է հակամանրէային ակտիվությամբ տարբեր գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ, այդ թվում՝ տուբերկուլոզի հարուցիչների, ներհիվանդանոցային և հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտ, խոլերա, սիբիրյան խոց), Կանդիդա տեսակի սնկերի, դերմատոֆիտերի և բորբոսասնկերի, վիրուսների (այդ թվում՝ գրիպի, ներառյալ Ա թռչնի գրիպ H5N1, պոլիոմիելիտի, հեպատիտ Բ-ի, մարդու իմունային անբավարարության վիրուսի): Միջոցն օժտված է լվացող հատկություններով, չի առաջացնում մետաղների ժանգոտում, չի փչացնում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մշակվող մակերեսները, չի գունաթափում հյուսվածքները, չի ֆիքսում օրգանական աղտոտվածությունը: Միջոցը ոչնչացնում է ճարպի, յուղի, մրի, սպիտակուցային նստվածքների և շատ այլ դժվար հեռացվող նյութերի բծերը և նստվածքները ցանկացած տեսակի մակերեսներից (ապակի, հայելիներ, մետաղ, կերամիկա, գորգ, կաշի, քրոմապատ արտադրատեսակներ, բետոն, սալիկ, ռետին, պլաստիկ, վինիլ, ճենապակի, հախճապակի և այլ, այդ թվում` ծակոտկեն): Ախտահանիչ միջոցը նախատեսված է կուվեզների և դրանց հարմարանքների ախտահանման համար, շնչական ապարատների և հարմարանքների (այդ թվում` անեսթեզիոլոգիական խողովակների), ատամնաբուժության մեջ կիրառվող ալգինատային, սիլիկոնային նյութերից, պոլիեթերային խեժից պատրաստված ատամնաբուժական արտատպվածքների, մետաղներից, կերամիկայից, պլաստմասե և այլ նյութերից ատամնապրոթեզային կաղապարների, արտիկուլյատորների, թքարտածծիչների և արտածծիչ հարմարանքների ախտահանման և լվացման համար, բշկական նշանակության իրերի (ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական, այդ թվում` պտտվող, գործիքներ, ճկուն և կոշտ էնդոսկոպներ և դրանց համար նախատեսված գործիքներ) ախտահանման և նախամանրէազերծային մաքրման (այդ թվում` ախտահանման հետ համակցված) համար: Փաթեթավորումը 1լ պոլիէթիլենային տարաներում Ունի ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ` առ 10 հունիսի 2016թ., թիվ 1792-Ա:Հանձնելու պահին խտանյութի պիտանիության ժամկետի 1/2 ի առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի հավաստագրի առկայություն: Նոր է, չօգտագործված: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Խաչպար ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2023/15-2-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

<table>
<tr><td rowspan="2">Номер лота</td><td colspan="3">Предлагаемый товар</td></tr>
<tr><td>товарный знак</td><td>наименование производителя</td><td>технические характеристики</td></tr>
<tr><td>64</td><td></td><td></td><td></td></tr>
</table>